

Պարտէզները ածուներու բաժնուած հողամասեր էին, մասնաւորապէս տան բանջարեղէնի մատակարարութեան համար մշակուած եւ հայերէն դեղեցիկ բացատրութեամբ կը կոչուէին Էծուք = Ածուք:

Ժողովրդական զարմանալի դարձուածքով ածուն ալ առուի էր փոխուած, օրինակ.— հիմզ էռու էծուք կը նշանակէր հինգ ածուներու բաժնուած բանջարանոց մը:

Այս պարտէզներու մեծամասնութիւնը առանց ցանկապատի եւ իրարու կից հողամասեր էին, տուներու մօտ ու ոռոգելի:

Իսկապէս զարմանալի էր թէ ինչպէս տան տիկինը իր առօրեայ դորձերէն ժամանակ կրնար տրամադրել պարտէզի մշակութեան համար ու ապահովել իր տան պէտքերը այդքան փոքր տեղէ մը, առանց անտեսելու նաեւ դրացի չքաւորները:

Ան իր շալակովը կը կրէր աղբը կ'ընէր քաղհանումը, ցանումը ու շարաթներ վերջ նաեւ Սիթիլը, ջուրը բերելով հեւաւոր աղբիւրներէ:

Զօրանոցի ետեւի ու Սուրբ Գրիգորի պարտէզներու մեծ մասը թուրքերու կը պատկանէին, բայց բարի դրացնութեան սկզբունքին դէմ թուրքերէ շատ քիչեր մեղանշած են:

Հայրենակիցներ առանց վարանումի կը խոստովանին թէ նկատելի ոչ մէկ դէպք վրդոված էր այս վստահութիւնը:

Մեր մայրերն ու քոյրերը ազատօրէն կ'երթային այդիններն ու պարտէզները, ոսկին իրենց գլխուն վրայ, ըստ ժողովրդական ասութեան:

Հայերու պարտէզները կեդրոնացած էին Վարի Գետի, Սուրբ Գրիգորի եւ Իլիպէյի ճամբուն վրայ, կապուած Վարի Գետի մշտահոս ջուրին:

Այս ջրաբքի վայրերու բանջարեղէններն ու հազարները արտակարգօրէն մեծ կ'ըլլային:

Պարտէզի բերքը գրեթէ նոյնն էր ամէն տարի, բայց տեղի փոփոխութիւն կը կատարուէր անգիտակցաբար:

Սոինն ու սխտորը ժամանակին քաղուած կը հիւսուէին ու տանիքներէ վար կը կախուէին չորնալու համար: Կարմիր Ֆրէնկը կը ճղուէր ու արեւին դիմաց կը դրուէր խտանալու ու Ֆիլիպի ձուրը ըլլալու համար: Տաքտեղը կէս կարմրած շորոցներով կը կախուէր չորնալու ու կարմիր պիպէր ըլլալու համար: Կծու ու անգոյն պղպեղները կը չորցուէին ու եղածին պէս (զապըրճակ) կը դրուէին